ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս 27 30 97, E-mail: info@yermetro.am, www.yermetro.am

№ 39/02-25-154 19 04 2018 թ.
Ձեր № _____ առ "____" _____ 201 թ.

ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ
պարոն Ա. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

21.03.2018 թ. 39/02-25-96 գրությամբ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ դիմել էր Ձեզ Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող Երևանի մետրոյի վերակառուցման ծրագրի Փուլ II-ի վարկի հասանելիության վերջնաժամկետը մինչև ծրագրի ավարտը՝ 2019թ.-ի սեպտեմբերը երկարաձգելու խնդրանքով:

Հայտնում ենք ձեզ, որ այս վերջնաժամկետը ընտրվել է հետևյալ հիմնավորմամբ. համաձայն «Դրենաժային թունելի երկարացման և մետրոյի թունելներում վերականգնողական աշխատանքների» վերաբերյալ 14.02.2018թ.-ին կնքված Հավելված 3-ի՝ դրենաժային թունելի հորատանցումը իրականացնող «Ազազոս» Ս.Լ. ընկերությունը աշխատանքները պետք է ավարտի 2018թ. դեկտեմբերի 31-ին: Ըստ ծրագրի իրականացման աջակցության խորհրդատուի՝ ավստրիական ՀՁ «Հիդրո Ինժենյոր Բերնարդ Ինժենյոր», նկատի առնելով կապալառուի աշխատանքների դանդաղ տեմպերը, ծրագրի իրատեսական ավարտը կարող է լինել 2019թ. սեպտեմբերը:

Ուստի, հաշվի առնելով, որ աշխատանքների ավարտից հետո իրականացվելու են դրենաժային թունելի փորձարկման աշխատանքներ, ստորագրվելու է կառույցի հանձնման վկայագիրը, որից հետո Գործատուն բանկային երաշխիքի դիմաց պետք է Կապալառուին վերադարձնի վճարումներից պահված գումարը, ապա, կարծում ենք, որ մինչև 2019թ.-ի սեպտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածը բավական կլինի վերը նշված գործընթացների և վերջնական վճարումների իրականացման համար:

Հարգանքով՝

Տնօրեն Փ. Յայլոյան

Կատարող՝ Տաթևիկ Ուռուտյան
Հեռ. 060 46 01 01/9242